# ԴԵՐԵՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ



Դեկտեմբերի 6-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ութսունամյա հասակում, վախճանվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, Հայաստանի Սովետական գրողների միության նախագահության և վարչության անդամ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանը:

Դերենիկ Դեմիրճյանը իրավամբ ճանաչվել և մեծարվել է որպես հայ բանաստեղծության և գեղարվեստական արձակի լավագույն ներկայացուցիչներից մեկը, ավելի քան իր վաթսուն տարվա գրական վաստակով։

Հայ ընթերցող հասարակությունը միշտ էլ ջերմությամբ ու հարաճուն համակրանքով է շրջապատել իր սիրելի վարպետին։ Դե-

միրճյանի ստեղծագործությունը զարգացել է մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի հետ զուգընթացաբար, տալով ու զարգացել՝ իրականության խորունկ ճանաչումով և տոգորված է եղել առողջ հայրենասիրությամբ։

Դեմիրճյանը, հայրենի գրականության մատուցած իր ծառայությունների համար, պարգևատրվել է պետական շքանշաններով։ 1939 թվականին նա պարգևատրված է Լենինի շքանշանով, իսկ 1949 և 1956 թվականներին՝ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով։

Դեմիրճյանի մահը մեծ կորուստ է հայ գրականության համար։

Մեծանուն գրողի թաղումը կատարվեց համազգային վշտի և սգի մեջ։ Դագաղը դրվեց Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում։ Դեկտեմբերի 8-ին, սգո մեղեդիների հնչյունների տակ, հայ ժողովուրդը տողանցեց մեծանուն գրողի դագաղի առաջ, մատուցելով նրան իր վերջին հարգանքը։ Սգո հսկայական թափորով մեծանուն գրողի դագաղը առաջնորդվեց Պանթեոն, որտեղ, հրաժեշտի խոսքերից հետո, Դերենիկ Դեմիրճյանի մարմինը ամփոփվեց գերեզմանում։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի անունից թաղման հանդեսին ներկա գտնվեց Հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մաշտոց վարդապետների գլխավորությամբ մի պատվիրակություն, որը հանուն Վեհափառ Հայրապետի գեղեցիկ ծաղկեպսակ դրեց դագաղի վրա։

Մեծանուն գրողի մահվան առթիվ Վեհափառ Հայրապետը ուղղեց հետևյալ ցավակցական գրությունը.

«Այսօր, երբ ողջ հայ ժողովուրդը հողին է հանձնում մարմինը իր տաղանդավոր, բազմավաստակ զավակներից մեկի՝ մեծ վիպասան Դերենիկ Դեմիրճյանի, Մենք ևս վշտահար, հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, գալիս ենք մեր հարգանքը մատուցելու աղոթելով, որ Տերը խաղաղությամբ ընդունի հանգուցյալի հոգին և նրա սուրբ հիշատակն ու բազմերախտ գործը մնան հավիտյան լուսավոր և անթառամ ի փառս հայ ստեղծագործ հանճարի»։

Հավիտենական հանգի՜ստ մեծ գրողի վաստակավոր հոգուն։

